ՍՈՎԵՏԱՀԱՅ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԱԽՏԱՎՈՐԸ

(Ակադեմիկոս Ա. Ս. Ղարիբյանի ծննդյան 70-ամյակի առթիվ)

Բոլորեց ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս, բազմավաստակ լեզվաբան, մանկավարժական կադրերի պատրաստման անիսնջ մշակ, Հայկական ՍՍՀ գիտության վաստակավոր գործիչ Արարատ Սահակի Ղարիբյանի բեղմնավոր կյանքի 70-տարին:

Ա. Ղարիբյանը ծնվել է 1899 թ. հունվարի 27-ին, Արտաշատի շրջանի Այգեզարդ (Դարգալու) գյուղում, գյուղացու ընտանիքում: Սկզբնական կրթությունն ստացել է Երևանի արական գիմնազիայում, բարձրագույնը՝ պետական համալսարանում:

Համալսարանն ավարտելուց հետո, Անռայանի ցանկությամբ, դառնում է նրա առաջին ասպիրանտը և միաժամանակ դասախոսություններ կարդում Երևանի բուհերում:

Ա. Ղարիբյանը 1937 թ. պաշտպանել է «Հայոց լեզվի հոգնակիները և նրանց լեզվաբանական արժեքը» թեմայով թեկնածուական դիսերտացիա, իսկ 1940 թ. «Հայ բարբառների մի նոր հյուղ» թեմայով՝ դոկտորական դիսերտացիա և ստացել բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճան և պրոֆեսորի կոչում:

Հաշվի առնելով Ա. Ղարիբյանի գիտական գործունեությունը, 1947 թ. նրան ընտրում են Հայաստանի գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ, իսկ 1960 թ.՝ ակադեմիկոս: 1954 թ. անվանի լեզվաբանին շնորհվել է հանրապետության գիտության վաստակավոր գործիչի պատվավոր կոչում:

Ակադեմիկոս Ա. Ղարիբյանը դասախոսական աշխատանքներ է տարել ինչպես Երևանի, այնպես էլ Բաքվի, Թբիլիսիի, Լենինականի մանկավարժական ինստիտուտներում:

Ա. Ղարիբյանը մանկավարժական գործունեությունը զուգակցելով գիտական աշխատանքի հետ՝ կազմել է դասագրքեր, ինքնուսույցներ, բառարաններ, գրել մեթոդական, բարբառագիտական, լեզվաբանական աշխատություններ:

Ա. Ղարիբյանը իսորը ուսումնասիրելով Հ. Անռայանի «Հայ բարբառների դասակարգումը» աշխատությունը, հայտնաբերեց բարբառային մի նոր «Ս» հյուղ, որով և նոր ուղի բացեց բարբառների ավելի լայն ու խորը ուսումնասիրության համար: Նրա և իր հետնորդների ջանքերով հայտնաբերվեցին հայերենի, մինչ այդ անհայտ, տասնյակ բարբառներ ու խոսվածքներ:

Ակադեմիկոս Ա. Ղարիբյանը մեծ աշխատանք է կատարել հայ բառարանագրության գծով: Լայն ընդունելություն են գտել 1940 թ. նրա կազմած ուղղագրական բառարանները, իսկ հեղինակի ռուս-հայերեն ստվարածավալ միհատորանոց բառարանը կարևոր ներդրում է հայ բառարանագրության պատմության մեջ:

Ա. Ղարիբյանը հսկայական աշխատանք է կատարել լեզվաբան երիտասարդ կադրերի պատրաստման գործում:

Յոթանասունամյա լեզվաբանը երիտասարդական եռանդով այսօր էլ շարունակում է իր գիտա-մանկավարժական աշխատանքները: Ցանկանում ենք նրան նորանոր հաջողություններ հայ ժողովրդի հոգևոր մշակույթին ծառայելու վեհ գործում:

Գ. ԳԱՍՊԱՐՅԱՆ